ՏՔՆԵԼ ՀԱՄԱԲՈՎԱՆԴԱԿ ՔՐԻՍՏՈՍԻ ՎՐԱ, ՈՒՄ ՆԱԽԱՏԻՊԸ ԲԱՐԻ ԵՐԿԻՐՆ Է, ԵԿԵՂԵՑՈՒ՝ ՈՐՊԵՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՀԱՐՍԻ՝ ԻՐԵՆ ՀԱՆՈՒՆ ՏԻՐՈՋ ԳԱԼՍՏԻ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Որպեսզի հասկանանք, թե ինչ նշանակություն ունի իսրայելացիների
Քանան մտնելը և պատերազմը Քանանում, պետք է իմանանք,
որ Քանանը, ըստ նախատիպերի, կրկնակի նշանակություն ունի.
դրական կողմից՝ Քանանը՝ հարստության երկիրը,
համաբովանդակ Քրիստոսի և Նրա անքննելի
հարստության նախատիպն է.
բացասական կողմից՝ Քանանը խորհրդապատկերում է
Սատանայի խավար թագավորության օդային մասը՝ երկնային մասը,
երկնային ոլորտները, որոնք լի են սատանայական ուժերով:

Քրիստոսին՝ որպես բարի երկրի, լիովին տիրելու համար մենք պետք է
զգուշանանք անհավատության չար սիրտ ունենալուց.
մենք պետք է վարժենք հավատքի մեր հոգին և
մեր սիրտը պահենք դեպի Տերը դարձած, որպեսզի ողջ սրտով հավատանք
Նրա խոստումներին, հավատանք, որ Նա Իր ժողովրդի հետ է,
և հավատանք, որ մենք լիովին կարող ենք հաղթել:

Իսրայելի ժողովուրդը մի կողմ էր դնում բարի երկրի վրա տքնանքից
ստացած իրենց արտադրանքի որոշակի բաժին՝
Աստծուն երկրպագելու նպատակով.
եթե հավատարմորեն տքնենք համաբովանդակ Քրիստոսի վրա,
կունենանք Քրիստոսի հարստությունը՝ որպես արտադրանք,
որը կարող ենք ի ցույց դնել եկեղեցում,
և կունենանք Քրիստոսի հավելուրդը, որը կարող ենք
եկեղեցական հավաքույթներ բերել՝
Աստծուն հոգում և ճշմարտացիությամբ
ընդհանրականորեն երկրպագելու համար:

Աստծու կենդանի խոսքը պետք է թափանցի մեր էությունն ու
մեզ ազատագրի մեր տարակուսող մտքից ու մեր թափառող շնչից՝
մեզ մտցնելով Քրիստոսի՝ որպես շաբաթի հանգստի մեջ մեր հոգում.
մենք չպետք է լինենք մարդիկ, որոնք վարանում են
իրենց շնչի թափառումներում.
ընդհակառակը, մենք պետք է ուրանանք մեր շունչը և
առաջ շարժվենք՝ դեպի մեր հոգին, որպեսզի հաղորդ լինենք ու վայելենք
երկնային Քրիստոսին, ինչը մեզ թույլ կտա մասնակցել
թագավորության հանգստին՝ հազարամյայում Նրա թագավորման մեջ:

© 2023 Living Stream Ministry

ՊԱՏԵՐԱԶՄԵԼ ԲԱՐԻ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ

Առաջին հաղորդում

Պատերազմել բարի երկրի համար

Գրվածքների ընթերցում. Հս 1:2-6, 13, Եփս 2:2, 6:12, Կոլ 1:12-13

I. Եթե ուշադրությամբ կարդանք Գրվածքները, կտեսնենք, որ բարի երկրի համար մարտ է մղվում՝ Հս 1:2-6, 13.

Ա. Սատանան՝ Աստծու թշնամին, հնարավոր ամեն ինչ անում է, որպեսզի Աստծու մարդկանց խանգարի տիրելու և վայելելու Քրիստոսին՝ որպես բարի երկրի՝ Եփս 2:2, 6:12:

Բ. Հին Կտակարանում բոլոր մարտերը կապված են եղել բարի երկրի հետ՝ Հս 1:2-6, 5:11–6:27:

II. Որպեսզի հասկանանք, թե ինչ նշանակություն ունի իսրայելացիների Քանան մտնելը և պատերազմը Քանանում, պետք է իմանանք, որ Քանանը, ըստ նախատիպերի, կրկնակի նշանակություն ունի՝ Կոլ 1:12, Եփս 1:3, 2:2, 6:12.

Ա. Դրական կողմից՝ Քանանը՝ հարստության երկիրը, համաբովանդակ Քրիստոսի և Նրա անքննելի հարստության նախատիպն է՝ Երկ Օր 8:7-10, Կոլ 1:12, Եփս 3:8.

1. Բարի երկիրը Քրիստոսի վերջնական նախատիպն է, որ պարունակված է Գրվածքներում՝ Երկ Օր 8:7:
2. Բարի երկիրը՝ Քանանի երկիրը, Քրիստոսի նախատիպն է, ով ամեն բան է և ամեն բանում է, և ով ամեն ինչ է մեզ համար՝ Եփս 3:8:
3. Աստվածաշնչում երկիրը Քրիստոսի պատկերումն է՝ խորհրդանիշը՝ Ծնդ 1:9, Բ Պտ 3:5.
   ա. Երկիրը, որ Ծննդոցի 1:9-10 և 13-ում երրորդ օրը դուրս եկավ մահվան ջրերից, հարուցանված Քրիստոսի նախատիպն է, ով երրորդ օրը ելավ մահից:
   բ. Աստծու՝ Գրվածքներում բացահայտած մտադրությունն այն է, որ Քրիստոսը պետք է մեր երկիրը լինի՝ Երկ Օր 8:7-10:

Բ. Բացասական կողմից՝ Քանանը խորհրդապատկերում է Սատանայի խավար թագավորության օդային մասը՝ երկնային մասը, երկնային ոլորտները, որոնք լի են սատանայական ուժերով՝ Եփս 2:2, 6:12.

1. Սատանան ունի իր իշխանությունն ու իր հրեշտակները, որոնք նրա ենթականերն են՝ ղեկավարությունները, իշխանությունները և այս աշխարհի խավարի աշխարհակալները. ուստի նա ունի իր թագավորությունը՝ խավարի իշխանությունը՝ Գրծ 26:18, Մտթ 12:26, 25:41, Եփս 6:12, Կոլ 1:13:
2. Մինչ օրս չար ուժերը Քրիստոսի համաբովանդակությունը քողարկում են Աստծու մարդկանցից՝ 2:8, 18, Բ Կրթ 4:4:
3. Եփեսացիներին ուղղված թուղթը ցույց է տալիս, որ երկնային ոլորտներում տարբեր շերտեր կան՝ 1:3, 2:2, 6:12.

ա. Քրիստոսն ամենաբարձր շերտում է՝ երրորդ երկնքում, որպեսզի լինի մեր ամեն ինչը՝ որպես մեր բարի երկիրը՝ Երկ Օր 8:7-10:

բ. Երկնային ոլորտներում կա ավելի ստորին շերտ՝ օդը, որտեղ Սատանան՝ որպես օդի իշխանության կառավարիչը, երկրի վրայի մարդկանց խանգարում է Աստծուն հպվելու և Քրիստոսին ընդունելու. սրա նախատիպը քանանացիներն են, որոնք Իսրայելին խանգարում էին բարի երկիրը մտնելու՝ Եփս 2:2:

4. Քանանացիները Սատանային հետևող ընկած հրեշտակների՝ ապստամբ հրեշտակների նախատիպն են, որոնք Սատանայի թագավորությունում դարձել են զորությունները, ղեկավարություններն ու իշխանությունները, երկնային ոլորտներում եղող չարի հոգևոր ուժերը՝ Հյտ 12:4, 7, Եփս 6:12:

III. Բարի երկիրը զբաղեցրած հեթանոսական տարբեր ցեղերը խորհրդապատկերում են մեր բնական կյանքի տարբեր տեսանկյունները.

Ա. Հեթանոս ցեղերի աստվածները (կուռքերը) (Ելց 23:24), որոնց հետևում կանգնած են դևերը (հմմտ Ա Կրթ10:20), ներկայացնում են չարի հոգևոր ուժերը (Եփս 6:12):

Բ. Մեր բնական կյանքի հետևում կանգնած են չարի ուժերը (հմմտ Մտթ 16:23, ծթգ 1), որոնք օգտագործում, նենգափոխում և ուղղորդում են մեր բնական կյանքի տարբեր տեսանկյունները, որպեսզի մեզ շեղեն համաբովանդակ Քրիստոսին տիրելուց և Նրա հարստությունը վայելելուց:

Գ. Քանի որ բնական կյանքը մեզ շեղում է Քրիստոսին տիրելուց և վայելելուց, պետք է ատենք այն (Ղկս 14:26) ու Քրիստոսի մեջ աճելով՝ պատրաստ լինենք այն դուրս քշելու:

Դ. Աստված միանգամից չի կտրելու մեր բնական կյանքը, որին խորհրդապատկերում են հեթանոս ցեղերը, որովհետև դա մեզ ներքուստ դատարկ կթողներ, և մենք կենթարկվեինք դևերով զավթվելու վտանգին, որոնց խորհրդապատկերում են դաշտի կենդանիները՝ Ելց 23:29, հմմտ Մտթ 12:43-45.

1. Աստված մեր բնական կյանքն աստիճանաբար է կտրում, քիչ-քիչ՝ ըստ աստվածային կյանքում մեր աճի աստիճանի՝ Ելց 23:30:
2. Որքան շատ Քրիստոսը մեծանա մեր մեջ, այնքան Նա շատ կփոխարինի մեր բնական կյանքին:

Ե. Աստված խոստացավ դուրս քշել հեթանոս ցեղերին (խխ. 29-30), բայց Աստծու ժողովուրդը պետք է Նրա հետ համագործակցեր՝ նախաձեռնություն ցուցաբերելով դրանց ոչնչացնելու մեջ՝ խխ. 31-33, հմմտ Հռմ 8:13, Գղտ 5:24, Կղս 3:5, Փլպ 2:12-13:

Զ. Որքան շատ Քրիստոսը մեր մեջ մեծանա, մենք այնքան շատ ի վիճակի կլինենք Աստծու հետ համագործակցելու մեր բնական կյանքը դուրս քշելու հարցում:

IV. Եթե ուզում ենք տիրել բարի երկրին Աստծու մտահղացման իրականացման համար, պետք է մասնակցենք հոգևոր պատերազմին, որպեսզի հաղթենք սատանայական ուժերին՝ Հս 6:21.

Ա. Մենք պետք է գիտակցենք հոգևոր պատերազմի՝ Սատանայի թագավորության և Աստծու թագավորության միջև պատերազմի անհրաժեշտությունը՝ Մտթ 6:10, 7:21, 12:26, 28, Եսյ 14:12-14:

Բ. Երբ Իսրայելը պատրաստվում էր տիրելու Քանանի երկրին, երկիրը բնակեցված էր դիվահար մարդկանցով, կռապաշտներով ու նեֆիլիմներով՝ Թվց 13:33:

Գ. Քանի որ Քանանի երկրում նեֆիլիմներ էին ապրում՝ ընկած հրեշտակների և ընկած մարդու խառնուրդը, Աստված Իսրայելի զավակներին հրամայեց տիրել այդ երկրին և ոչնչացնել այնտեղ եղող ամեն կենդանի էակի, որպեսզի մարդկային ցեղը մաքրվի՝ Երկ Օր 7:1-2.

1. Ըստ աստվածային մտքի՝ Քանանի երկրի ազգերը պետք է բնաջնջվեին, որովհետև դրանք դիվային էին և միաձուլված էին դևերի հետ՝ խ. 2, Հս 11:21-22, 14:6-14:
2. Քանանացիները խորհրդապատկերում են ոչ միայն ընկած հրեշտակներին, այլև մարդկանց, որոնք միացել են չար ոգիներին՝ օդում եղող խավարի սատանայական ուժերին՝ Թվց 14:45:

Դ. Արադի (21:1), ամորհացիների (խ. 21) և Բասանի (խ. 33) թագավորները Հորդանանի արևելյան կողմի «դարպասը պահողներն» էին, որոնք Սատանայի համար հսկում էին Քանանի երկիրը՝ խավարի թագավորությունը.

1. Աստծու զորքի կողմից հաղթված թագավորները խորհրդապատկերում են ղեկավարություններին, իշխանություններին և խավարի աշխարհակալներին, որոնց դեմ պետք է պայքարենք՝ Եփս 6:12:
2. Որպեսզի Իսրայելի զավակները բարի երկիրը մտնեին, նրանք պետք է անցնեին այս թագավորների վերահսկողության տակ գտնվող տարածքով և պետք է պատերազմեին նրանց դեմ, ոչնչացնեին նրանց և տիրեին նրանց տարածքին:
3. Քրիստոսի անքննելի հարստությունը ձեռք բերելու համար մենք պետք է ջախջախենք հոգևոր թշնամիներին, որոնք խորհրդապատկերված են Արադի թագավորով, ամորհացիների Սեհոն թագավորով ու Բասանի Օգ թագավորով՝ 3:8, 6:10-12:

Ե. Երկրի բնակիչների դեմ Իսրայելի մարտնչելը պատկերում է անտեսանելի հոգևոր պատերազմը, որը տեղի է ունենում երկրի վրայի տեսանելի իրադրության հետևում՝ Դնլ 10:10-21, Եփս 6:10-20.

1. Մեզ համար շատ կարևոր է տեսնելը, որ տեսարանի հետևում հոգևոր պայքար է տեղի ունենում, պայքար, որ տեսանելի չէ մարդկային աչքերին:

2. Բացի երկրի վրա տեղի ունեցող պատերազմից՝ պատերազմ է ընթանում Աստծու և օդում եղող սատանայական ուժերի միջև՝ 2:2, 6:12:

Զ. Քանանացիների դեմ Իսրայելի զավակների մարտնչելը, որի նպատակը բարի երկրին տիրելն ու այն վայելելն էր, ընդհանուր առմամբ եկեղեցու, ներառյալ նրա բոլոր անդամները, հոգևոր պատերազմի նախատիպն է, որը մղվում է «երկնային ոլորտներում եղող չարի հոգևոր ուժերի դեմ» (խ. 12), որպեսզի սրբերը վայելեն Քրիստոսին՝ որպես համաբովանդակ երկրի:

Է. Քրիստոսը մեր բարի երկիրն է, և Աստված ուզում է, որ մենք ձեռք բերենք Քրիստոսին, բայց մեր ու բարի երկրի միջև սատանայական, դիվային ուժերի շերտն է. եթե ուզում ենք տիրել բարի երկրին մեր վայելքի համար, պետք է հաղթենք այս սատանայական ուժերին՝ Կող 1:12-13, 2:15, Եփս 3:18, 6:11-12.

1. Չափազանց իրական հոգևոր պատերազմ է տեղի ունենում, որին մենք պետք է մասնակցենք. մենք պետք է մարտնչենք, որպեսզի ձեռք բերենք համաբովանդակ Քրիստոսին՝ եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի, նոր մարդու և Աստծու թագավորության կառուցման համար՝ խխ. 10-12, Ա Տմթ 6:12ա, Բ Տմթ 2:3-4, Կող 1:13, 18, 2:19, 3:10-11:

2. Եթե ուզում ենք տիրել Քրիստոսին մեր վայելքի համար, մենք պետք է ընդհանրական ռազմիկ լինենք՝ եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը. մենք պետք է մարտնչենք սատանայական ուժերի դեմ և դրանց հաղթենք, որպեսզի ավելի շատ Քրիստոս ձեռք բերենք՝ Քրիստոսի Մարմինը կառուցելու, Աստծու թագավորությունը հաստատելու և տարածելու համար, այնպես որ Քրիստոսը վերադառնա և ժառանգի երկիրը՝ Եփս 3:8, 4:16, Մտթ 24:14, Հյտ 11:15:

© 2023 Living Stream Ministry